Երևանի պետական համալսարանի հարգարժան ռեկտոր Արամ Սիմոնյան, տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հարգարժան դեկան Հայկ Սարգսյան, հարգարժան գործընկերներ, ուսանողներ

Բարձրագույն կրթության հայաստանյան մայր բուհը հերթական հոբելյանն է նշում, և վերստին առիթ է ներկայանում բարձր հարթակից հնչեցնելու նրա հասցեին գնահատանքի ու երախտագիտության խոսքեր, հպարտությամբ հաստատագրելու, որ շուրջ մեկդարյա գոյության ու գործունեության ոլորաններում այն մշտապես պատվով է իրականացրել սերունդներին համալսարանական կրթություն տալու իր բարձր առաքելությունը: Պատիվ ունեմ այս մասին հավաստելու որպես համալսարանական: Հետևաբար այսօրվա տոնակատարությունն ինձ համար անձնական է ու սրտամոտ, քանզի առնչվում է ինձ՝ ոչ միայն որպես Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորի, այլև համալսարանականի, ով տակավին երիտասարդ ոտք է դրել այս կրթօջախ, ուսանել հենց տնտեսագիտական ֆակուլտետում, առնչվել համալսարանական մեծանուն տնտեսագետների հետ, մասնագիտական ու մարդկային դասեր քաղել նրանցից և իր վրա կրել այս ոգեղեն մթնոլորտի ու նրա նվիրյալների բարերար ազդեցությունը:

Հիրավի, տոն է այսօր ԵՊՀ-ում. նշվում է երկու հրաշալի հոբելյան՝ նվիրված տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հիմնադրման 80 և վերաբացման 30 ամյակներին, որոնք լրացնում են միմյանց ու վերահաստատում են այն մեծ ներուժն ու կամքը, որ կա այս բնագավառի բարձրորակ մասնագետներ պատրաստելու գործում: Բակալավրիատում և մագիստրատուրայում ժամանակի հրամայականով ստեղծվել են բազմաթիվ մասնագիտություններ, որոնք միտված են բարձրորակ կրթությանը և արհեստավարժ մասնագետների պատրաստմանը, կրթության որակն այստեղ համադրելի է ամենաբարձր չափանիշներին:

Համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը գիտական սկզբունքայնությամբ ու նախանձախնդիր կերպով պատրաստում է նաև գիտնական-հետազոտողներ, որոնք կերտում են ժամանակակից հայ տնտեսագիտական միտքը և ապահովում սերնդափոխությունը բուհում: Այս ամենի հետ մեկտեղ, անում եք ամեն ինչ, որ ձեր շրջանավարտները լինեն Հայաստանի Հանրապետության արժանավոր

քաղաքացիներ, աշխատեն ու ստեղծագործեն ի փառս մեր հայրենիքի զարգացման ու հզորացման:

Սիրելի համալսարանականներ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորատի, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության ու անձամբ իմ անունից ընդունեք ջերմ շնորհավորանքներ այս գեղեցիկ հոբելյանների առիթով: Հավաստիացնում եմ՝ սերվելով կրթության մայր տաճարից՝ մեր համալսարանը միշտ ապրում և ուրախանում է ձեր հաջողություններով, ձեռքբերումներով: Թույլ տվեք մաղթել ձեզ գիտական, ուսումնական նորանոր հաջողություններ և արգասաբեր գործունեություն:

Հարգանքով՝

Կորյուն ԱԹՈՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր, դոկտոր, պրոֆեսոր

09.12.2014 թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ